

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

**ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԼՍԷ ՄԵՐ
ԱՂՕԹՔՆԵՐԸ ԵԹԷ ԻՐ ԿԱՄՔԻՆ
ՀԱՄԱՉԱՅՆ ԵՆ**

1.- Իրիկունը, առտուն ու կեսօրը պիտի գանգատիմ ու հառաչեմ: Անիկա պիտի լսե իմ ձայնս (Մաղմուս 55:17):

2.- Ձիս պիտի փնտռեք եւ գտնեք, ձեր բոլոր սրտով պիտի խնդրեք զիս ու ես ձեզի պիտի երեւիմ, կ'ըսե Տէրը (Եր. 29:13):

3.- Արդարները կ'աղաղակեն եւ Տէրը կը լսե ու իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնք (Մաղմուս 34:17:)

4.- Համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ այն վստահութեամբ՝ որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսե մեզ (Ա. Յովհաննու 5:14):

5.- Խնդրեցէք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտռեցէք եւ պիտի գտնեք, բախեցէք եւ պիտի բացուի ձեզի (Մատթէոս 7:7):

6.- Եթէ այդպէս է կը նշանակէ, թէ անոնք՝ որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի որ մարմնատրոսապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին Օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ Օրէնքը չի կրնար ընել մարդկային բնութեան տակ ըլլալուն պատճառով, Աստուած իրազործեց՝ աշխարհի որկերով իր Որդին... *Շարունակել կարդալ (հռոմայեցիներու 8):*

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԲՈՆԻՉ



Բառը ինքնաբացատրական է, կը նշանակէ բռնելիք Եկեղեցական բառացուցակին մէջ բռնիչ հոմանիշն է դաստառակին եւ բշխունին: Անիկա սրբազան սպասներ բռնելու կը ծառայէ: Ինչպէս Աւետարանի բռնիչ՝ որ Աւետարանը բռնելու համար է: Խաչի բռնիչ՝ խաչը բռնելու համար:


Բռնիչը սրբութեան եւ նուիրականութեան երեւոյթը կը շեշտէ:

Աւետարանն ու խաչը սրբութիւններ են, կարելի չէ զանոնք պարզ ձեռքերով բռնել, որոնք կրնան աղտոտ ըլլալ:

Ս. Պատարագին երբ սարկաւազը Ս. Սեղանէն վառ կ'իջեցնէ մասը, անիկա ափսէին մը մէջ բռնիչով ծածկուած կ'ըլլայ:

Ս. Լուսատրչի Մուսն ի Վիրապ տօնին, երբ սրբազան մասունքներով հանդիսատր թափօր կը կազմուի Անթիլիասի շրջափակին մէջ, միասնաբար հայրեր սրբազան մասունքները մասնատր բռնիչով իրենց ձեռքերուն կ'ունենան:

ԾԻՍԱՐԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԲԻ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 28 ՄԱՅԻՍ 2023

ԹԻՒ 22

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 2.1-21:Յh 14.25-31

ՏՕՆ ԳԱԼՍԵԱՆՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ (ՊԵՆՏԵԿՈՍԷ)

Աւետարան ըսք Յովհաննէսի 14.25-31

ՅԻՍՈՒՄ ԸՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

14.25-31

Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի որկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է՝ որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախճաք: Լսեցէք ինչ որ ըսի ձեզի, թէ *«Ախա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»*: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք, որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւ երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն չունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ, թէ ես Հայրը կը սիրեմ եւ այդ է պատճառը, որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէք, երթանք այստեղէն:

Սիրելի Քրիստոսը ու պահել Անոր պատուիրանները երկու անբաժան նշմարտութիւններ են մեր քրիստոնէական կեանքին մէջ: Եթէ կը սիրենք Յիսուս, անպայման կը հաւատանք Անոր Խօսքին ու հաւատարիմ կը մնանք անոր հոգիին: Երբեմն ալ, լսել Խօսքը, մշակել զայն, խորհրդածել անոր մասին՝ մեզ անպայման կ'առաջնորդէ սիրելու Քրիստոսը: Քրիստոսը կը սիրենք այն ատեն, երբ մենք կը սկսինք ընդունիլ մեր նմանը իբրեւ եղբայր՝ իբրեւ սիրելի, այլ խօսքով՝ երբ մեր նմանը սիրենք եւ սրտանց օգտակար դառնանք անոր, այն ատեն նշմարտապէս սիրած կ'ըլլանք մեր երկնաւոր Հայրը: Բոլորս ալ խաղաղութիւնը սիրող ենք եւ խաղաղութիւն կ'ուզենք: Այդ խաղաղութիւնը Քրիստոս նախքան երկինք համբառնալը թողուց մեզի: Կը մնայ մեր հաւատով եւ Քրիստոսի ապաւինելով գտնել այդ խաղաղութիւնը մեր առաքելութեան ընդմէջէն:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ



Քրիստոսի Յարութենէն 50 օր ետք, երբ Երուսաղէմի մէջ մեծ թիւով ժողովուրդ հաւաքուած էր Պենտէկոստէի առթիւ, առաքեալները Տիրոջ պատուէրին համաձայն Վերնատուն հաւաքուեցան: Անոնք մէկ սիրտ դարձած կ'աղօթէին սպասելով Ս. Հոգիին գալուստը, ինչպէս Յիսուս խոստացած էր: Յանկարծ սաստիկ հովի ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը: Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Ս. Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Առաքեալները գործնալով սկսան քարոզել ու վկայել Յիսուսի մասին: Աշխարհի տարբեր ժողովուրդներ, որոնք Երուսաղէմ հաւաքուած էին անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին, թէ ինչպէս անոնցմէ իւրաքանչիւրը իրենց սեփական լեզուով կը խօսի: Պետրոս առաքեալի ճառէն ետք 3000 հոգի դարձի եկան եւ մկրտուեցան Յիսուս Քրիստոսի անունով:

Հ ԱՐՅ ՈՒՄ ՊԱՏ ԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ՈՐԵՒԷ ՊԱՏԱՅԱԿԱՆ ԱՆՁ ԿՐՆԱՅ ԱՂՈԹԵԼ ՄԵՐ ԿՐԱՅ

Ո՛չ: Ամէն մարդ՝ ամէն մարդու համար կրնայ աղօթել, բայց ամէն մարդ՝ ամէն մարդու վրայ չի կրնար աղօթել: Որպէսզի կարենանք մարդու մը վրայ աղօթել կա՛մ պէտք է եկեղեցական կարգ ունենայ եւ կա՛մ պէտք է յատուկ կերպով Աստուծոյ կողմէ կանչուած եւ կոչում ստացած ըլլանք: Աստուծոյ կողմէ կանչուած մարդը՝ «աղօթքի հոգի» պէտք է ունենայ: Իսկ «Աղօթքի հոգի»-ն Աստուծոյ հոգին է, որ կը պարգեւէ:

Զաքարիա 12.10-ին մէջ կը խօսի «աղօթքի հոգի»-ին մասին: Երբ կ'ըսենք, թէ այսինչ մարդը Սուրբ Հոգիին կողմէ իրեն տրուած «աղօթքի հոգի» ունի չենք հասկնար, որ ան պարզապէս Սուրբ Հոգիով լիացած ու մկրտուած անձ մըն է, այլ՝ կը հասկանանք, որ ան Սուրբ Հոգիին օծութիւնը ունեցող մըն է, որ աղօթելու պարգեւը ունի, եւ կըրնայ աղօթել հիւանդի մը վրայ եւ բժշկել զինք: Հարկաւ միայն հիւանդի մը վրայ չէ որ կրնայ աղօթել, այլ կրնայ աղօթել ոեւէ անձի վրայ եւ յայտնել անոր Աստուծոյ կամքը իր անձին վերաբերեալ եւ Աստուծոյ պահանջուածը իրմէ: «Աղօթքի Հոգի» ունեցող մարդուն, Աստուած կը յայտնէ որոշ իրականութիւններ որոշ անձերու մասին, որոշ նպատակով մը: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Մէկը հիւանդացա՞ւ թող կանչէ եկեղեցւոյ երէցները, որպէզի իր վրայ աղօթեն եւ իւրով օծեն զինք, Տիրոջ անունով» (Յկ. 5.14):

Կրնայ սորբութեան եւ արդարութեան կեանք ապրող մարդ մը, նաեւ իր ձեռքը դնել մեր գլխուն վրայ եւ աղօթել մեզի համար:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԱՍՏՈՒԾՈՅ ՎԱՏԱՀՈՂԸ՝ ԻՐ ՄԻՐՏԸ ԹՈՂ ԱՆՈՐ ՅԱՆՁՆԷ

Աստուծոյ հետաքրքրութեան առարկան մեր գրպանները չեն, այլ՝ մեր սիրտն ու անոր ամբողջ սէրն է: Ան մեզմէ գործ ու աշխատանք պահանջելէ առաջ, կամեցողութիւն եւ պատրաստակամութիւն կը պահանջէ: Մեր կարողութիւնները իր տրամադրութեան ներքեւ դնելէ առաջ, նախ մեր անձերը դնենք:

Մեր ունեցածը Աստուծոյ վստահիլը լաւ բան է, բայց մեր անձերը անոր վստահիլը՝ գերազանցօրէն լաւ է: Աստուծոյ վստահող մարդը չի կրնար ինքզինք չյանձնել Աստուծոյ: Իսկ ինքզինք Աստուծոյ յանձնող մարդը՝ պէտք է յանձնէ նաեւ իր ամբողջ սիրտն ու սրտին կրակը, հոգին ու հոգերը, միտքն ու մտորումները, փափաքն ու փառքը, ահա այս ձեւով որ Աստուած կը մեծարուի:

ՈՍԿԵՂԷՆ ԽՕՍԶ

Արդարներուն տունները պիտի բարգաւաճին, մինչ ամբարիշտներուն գործերը կորուստի պիտի դատապարտուին:

Իմաստուններուն խօսքերը իմաստութեամբ յատկանշուած են, մինչ անմիտներուն խորհուրդները սխալական են:

Ամբարիշտներուն զոհերը պիտի են Աստուծոյ համար, մինչ ուղղամիտներուն ուխտը՝ ընդունելի:

ԱՌԱԿ 15

ԵՐԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԷ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԿ ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՐԻՏԵՆԱԿԱՆ ԳԼՏԱՍՏՆԵՐԻՆ ՄԱՍԻՆ, Կարդա՛ ՍԱԼՄՈՍ 50

Աստուած, Տէր Աստուածը ինք՝ խօսեցաւ, եւ կոչ ուղղեց աշխարհին, արեւելքէն մինչեւ արեւմուտք: Աստուած պիտի փայլատակէ Սիոնէն, որ կատարեալ է իր գեղեցկութեամբ: Մեր Աստուածը պիտի գայ՝ ո՛չ թէ լուռ կերպով, այլ՝ իր առջեւէն՝ լափող կըրակով, եւ զինք շրջապատող սաստիկ փոթորիկով: Երկինք ու երկիր վկայ պիտի կանչէ, որպէսզի դատէ իր ժողովուրդը: «Իմ քուս հաւաքեցէք ինձի հաւատարիմ մարդիկը, որոնք զոհի մատուցումով ինձի հետ ուխտ կնքած են»: Եւ երկինքը պիտի հռչակէ անոր արդարութիւնը, որովհետեւ Աստուած ինքն է դատաւորը: «Լաւ՛, ո՛վ իմ ժողովուրդս, եւ պիտի խօսիմ, եւ քեզի դէմ պիտի վկայեմ, ո՛վ ժողովուրդ Աստուծոյ, ես՝ Աստուածս, քո՛ւ Աստուածդ: Քու զոհերուդ համար չէ՛ որ կը յանդիմանեմ, ո՛չ ալ մշտականօրէն ինձի մատուցած ողջակեցներուդ համար: Ես պէտք չունի՛մ ագարակից ցուլերուն, ո՛չ ալ գովերուդ նոխագներուն, որովհետեւ ի՛մս են անտառին բոլոր կենդանիները, եւ հագարաւոր լեռներու վրայ արածող նախիրները. բարձունքներու թռչունները եւ բոլոր վայրի կենդանիները ծանօթ են ինձի եւ ինձի՛ կը պատկանին: Եթէ անօթեմայի՛ քեզի պիտի չըսէի, որովհետեւ ի՛մս է աշխարհը եւ ինչ որ կայ անոր մէջ: Ես ցուլերու մի՞ս կ'ուտեմ, կամ նոխագներու որի՞ւն կը խմեմ:

Եթէ ինձի զոհ պիտի մատուցանես՝ երախտագիտութի՛ւնդ ընծայէ, եւ կատարէ՛ Բարձեալ Աստուծոյս տուած քու խոստումներուդ. օգնութեան կանչէ զիս՝ երբ որ նեղութեան մէջ ես, եւ քեզ պիտի ազատեմ, եւ դուն պիտի փառաւորես զիս:

Շարունակել Սաղմոս գիրքէն